

ներքոյ,.... Թուրքը վայելով կազազ կեանք և մուսաստանի կուլ-
տուրայի բարիքները՝ ապրում է չատ լաւ. քիչ առ քիչ համակեր-
պւում է ուստաց պիտութեան հետ՝ և յաճախակի պատահում են
որ մուսաստանի թուրքերն ուխտազնացութեան զնալով Մէկկա,
այնտեղ իրենց բարեկեցիկ դրութեամբ շարժում են իրենց հաւա-
տակիցների և ցեղակիցների նախանձր.... Քանի որ իշխանութիւնը
կը գտնուի թուրք կառավարութեան և թուրք աստիճանաւորների
ձեռքում, քանի որ Թուրքն իւր պետութեան ինքնուրոյն զոյու-
թեան մէջ իւր անտանելի անչարժութեան պաշտպանութիւնը կը
գտնի՝ թուրքիան իւր նախկին զրութեան մէջ կը մնայ և կը լինի
յառաջադիմութեան խանդարիչ ոյժ. Բայց որովհետեւ տանիկ իշխան
ուղղակի կրօնական պարտականութիւն և համարում ատել օւրա-
գաւաններին՝ ուսի թուրքիայի ինքնուրոյն զոյութիւնը շարի ադ-
րիւր և ներկայացնում իրեն սուրադրեալ երիտոննեաների համար:*)

Պարզ է ուրեմն՝ քանի զոյութիւն ունի ինքնուրոյն Տաճկաս-
տան՝ այդ պետութեան մէջ ապրող քրիստոնեաներն էլ շարունակ
կենթարկուին հալածանքին. Պէտք է ուրեմն սչնչացը Տաճկաստանի
ինքնուրոյնութիւնը և արեւելքի քրիստոնեաների հզօր պաշտպան
Մեծն մուսաստանի գերիշխանութիւնը տարածուի Տաճկաստանում,
որպէս զի քրիստոնեաները տեսնեն իրենց կեանքի, գոյքի և պատուի
ապահովութիւնը:

Ա. Գ. Լ. Ի Կ. Ա. Ն. Ե Կ Ե Պ Ե Ց Յ ի.

Ամերիկական բարձրագոյն դպրոցը Բեյրութում. Արեւելքում
սակաւաթիւ բարձրագոյն դպրոցներից մէկն է համարւում Բէյրու-
թում զոյութիւն ունեցող Ամերիկական բարձրագոյն դպրոցը, որ
կէս զարիդ աւելի զոյութիւն ունի և այդ ժամանակի ընթացքում
ունեցել է տեղացիներից մեծ քանակութեամբ աշակերտներ: Այդ
բարձրագոյն դպրոցն աւարտողների մէջ աչքի են ընկնում դիտնա-
կաններ, բժիշկներ, գրողներ, վաճառականներ, կալուածատէրեր,
կառավարչական աստիճանաւորներ, որոնք տարածուած են Ասորի-
քում, Եգիպտոսում, Եւրոպայում, Ամերիկայում, Աւստրալիայում
և այլ լուսաւոր երկրներում: Բէյրութի ամերիկական դպրոցը սկսել
է իւր գործունէութիւնը 1866 թուբն: Ակղքներում ունեցել է 16
աշակերտ, որոնցից աւարտել են միայն 8 հոգի: Ներկայումս սովո-
րում են այնտեղ մինչեւ հազար հոգի: Աւարտել են այդ բարձրա-

*) Տես Ա. Կրիմսկու «Մահմեդական աշխարհն ու նրա ապագան»
գիրքը էջ 462—65, Բարգրանութիւն Բարգէն վարդապետի, Աաղարշ-
պատ 4906 թ.

դոյն դպրոցը շուրջ 2500 հոգի։ Դպրոցին կից կան 24 օժանդակ շինութիւններ, այնպէս որ հեռուից այդ ամրող տարածութիւնը առանձին քաղաքի տպաւորութիւն է թողնում։

Պրօֆեսորները այդ դպրոցում եղել են սկզբում թուով Յ. Վերջին ժամանակներս նրանց թիւն էր 80-ից աւելի։ Առաջ երկու ֆակուլտետ կար, ընդհանուր կրթական և բժշկական, 8—պատրաստական, ընդհանուր կրթական, վաճառականական, բժշկական, գեղարվան, ատամիարութական, ֆելդչերական և հնագիտական։ Մատիկ ապագայում պէտք է բացուին նաև երեք ֆակուլտետ, ճարտարապետական, հողաշինարարական և իրաւաբանական։ Այն ժամանակ Բէյրութի ամերիկական դպրոցը կըստանայ ձեմարանի կոչումն և իւր 11 ֆակուլտետներով կը լինի Արևելքում առաջին բարձրագոյն դպրոցը։ Այս բարձրագոյն դպրոցում բոլորն էլ ենթարկվում են մինույն կարգ ու կանոնին, չնայած որ պատկանում են զանազան ցեղերի։ Նրանց մէջ կան ասորեստանցիններ, եղիպատացիններ, տաճիկներ, պարսիկներ, հնդիկներ, չերկէսներ, քուրդեր, յոյներ հայեր, բոլգարներ և այլն իսկ դաւանութեան կողմից այստեղ սովորում են ժամինդականներ, զրուցներ, հրէաններ և քրիստոնեաններ—պրավուլավներ, բոլղքականներ, մարօնիաններ, կօպտեր, ունիաթներ և առորիններ։

Անցեալ տարի դպրոցում սովորում էին 960 աշակերտներ, որոնցից պրօվուպաւններ 280, մահմետականներ 208, բողոքականներ 167, հրէաններ 71, իսկ մնացածը այլ և այլ դաւանութեան պատկանողներ։ Դպրոցին կից կայ թանգարան, լաբորատորիա և զանազան տիպի հիւանդանոցներ։ Թանգարանները 7 հատ են—հնագիտական, երկրաբանական, բուսաբանական, կենդանաբանական, անդամանատական, ֆիզիքական և բժշկական։ Այդպէս էլ լարարութափանները բազկացած են մի քանի բաժանմունքներից։ Դպրոցին կից կայ աստղաբաշխական դիտարան, հարուստ գրադարան, բազկացած 17,000 հատորից։ Դպրոցին կից կան մի քանի հիւանդանոցներ—անդամանատական, կանանց, երեխայոց, ակնաբուժական, ականջների և կաշիների հիւանդութեանց։ Զափազանց շատ է առարկանների թիւը, որ դասաւանդուում են այդ դպրոցներում։ Մասնաւորապէս ընդհանուր կրթական ֆակուլտետում աւանդուում են վեց լեզուներ—արաբերէն, անգլիերէն, տաճկերէն, ֆրանսիերէն, լատիներէն և նոր-յուևնարէն։

Դպրանցում կրթութիւնը տարւում է դեմոկրատիկ սկզբունքներով, պրօֆեսաօրները վերաբերւում են դէպի աշակերտները, ինչպէս դէպի իրենց երեխանները։ Նոքա ունեն իշխանութիւն աշակերտների վրայ միայն զասերի ժամանակ, որից դուրս խիստ բարեկամական է պրօֆեսաօրների և աշակերտների յարաբերութիւն-

ներք: Աւսուցիչը իրաւունք չունի դիմել աշակերտներին խիստ նկատողութիւններով Եթէ աշակերտը մեղաղբւում է, այդ դէպքում զպրոցի Տևուչը կամ դասատուն նորան նկատողութիւն է անում չատ քաղաքավարի ձեռվ, զարգացնելով նորա մէջ բարոյական ինքնազիտակցութիւնը: Դպրոցում ամբողջ կրթութիւնը տարւում է այն ճանապարհով, որ աշակերտների մէջ առաջ կան ինքնազիտակցութիւն և համոզմունքների մշակումն: Այդ տեսակ կրթութեան նպաստումն և ուսուցիչների ու պրօֆեսորների օրինակելի կեանք: Աւսուցիչը չէ կարող աշակերտից պահանջել այն բարի յատկութիւնը, ինչ որ ինքը չունի: Օրինակն է ամենազլխաւոր հարողիչը և ամենակարեւոր դասիարակը: Դասատուների համար կան առանձին հրահանգութիւն, որի համաձայն և նորա պէտք է վարուն: Աւսուցիչը պատշաճ եղանակով վերաբերուելով դէպի աշակերտները՝ կարողանում է հանել պահպանելու իւր հեղինակութիւնն այն աստիճանի, որ աշակերտները ենթարկում են նորան ինքնակամ և բարեխղճարար: Դպրոցը սովորեցնում է աշակերտներին գործենի անձնական աղատութեամբ և ազատ մտածողութեամբ: Աշակերտները դպրոցին կից հիմնել են մուզիկայի, զրականական և մարմնամարդութեան ընկերութիւններ: Աշակերտները դպրոցում հրատարակում են ամսագիր, որը տարածւում է աշխարհի գանազան կողմնրու: Մի խօսքով այդ դպրոցը ներկայանում է մի շատ օրինակելի բարձրագոյն դպրոց: Արդէն 30 տարի է որ այդ դպրոցում աւանդւում են առարկաները անզիւրէն լեզուով, մինչդեռ առաջ եղել է արարերէն:

Կ Ա.Թ. Ա Լ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Նոր Պապը՝ Պիոս Հ-րդ պապի մահից յետոյ Հառմի գեհի վրայ բազմնց վերջերս ընարուած Բենեդիկտոս XV պապը: Բենեդիկտոս XV պապը ծնունդը է Խալիխայի ծննօվա քաղաքում 1854թ. նոյեմբերի 21-ին: Նորա ծնողներն էին աղնուական դասակարգին պատկանող մարկիզ Ջուզէպպէ և մարկիզունի Ջիօվաննա Միլիօրաթի, իրանց Ջիարօմօ որդուն օժտեցին բարձր ուամամբ և կըրթութեամբ: Ջիաքոմօն աւարտեց իւր բարձր ուսումը 1875 թ. և արժանացաւ իրաւագիտական պատուի, իսկ 1878 թ. դեկտ. 21-ին ձեռնադրուեց քահանայ և աստուածաբանական դիտութեանց վարդապետի աստիճանին արժանացաւ:

1885 թ. նշանակուեց քարտուղար Մադրիդի առաքելական նուիրակ Ռամազոլա կարդինալի, որի հետ եկաւ 1887 թ. Հուն, որտեղ Վատիկանի գիւանազիտական վարչութեան մէջ նախ իրի ատենադպիր և ապա իրրե փոխանորդ կարդինալ Ռամազոլայի: